

# ԽՈՒՍՏՈՒՓ

Խուստուփ լեռնազանգվածը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Կապան քաղաքից հարավ և հանդիսանում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորությունը: Բարձրությունը ծովի մակարդակից հասնում է 3210 մ:



Խուստուփ լեռնազանգվածը



Խուստուփի գագաթը

Խուստուփի գագաթային հատվածն աչքի է ընկնում մերկացած ժայռերով և քարաբեկորային կուտակումներով, որոնք պայմանավորում են լեռան գեղատեսիլությունը, որն անբացատրելի խորհրդավորություն է հաղորդում:



Խուստուփի գագաթային ժայռերը և քարաբեկորային կուտակումները

Խուստուփի գագաթային և մերձգագաթային հատվածներին բնորոշ են մարգագետնատափաստանները, լեռնամարգագետինները և քարասեր կամ պետրոֆիլ բուսականությունը:

Խուստուփի յուրահատուկ բնական պայմանները նպաստել են բուսական և կենդանական աշխարհի ձևավորմանը, որն իր ինքնատիպությամբ առանձնահատուկ ուշադրության է արժանի՝ համալրելով Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը:

Հարուստ ու բազմազան է Խուստուփի մարձգագաթային և գագաթային հատվածների **բուսական աշխարհը**, որում հաշվարկվում են 9 տեսակի սնկեր և 493 տեսակի բարձրակարգ բույսեր, որոնցից 17-ը գրանցված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում: Բուսական աշխարհի ինքնատիպությունը պայմանավորված է նաև 38 էնդեմիկ բուսատեսակների առկայությամբ, որոնցից 4-ը Հայաստանի, 9-ը՝ Հարավային Անդրկովկասի, 11-ը՝ Անդրկովկասի և 14-ը՝ Կովկասի էնդեմիկներ:

Գիտական և բնապահպանական տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Կարմիր գրքում գրացված Մերձարաքսյան լեռնաշղթաների տեղային էնդեմիկ *Ջանգակ զանգեզուրի-Campanula zangezura (Lipsky) Kolak. et Serdjuk.*, Կարմիր գրքում գրանցված *Սոխ Դերդերիանի-Allium derderianum Regel.*



Ջանգակ զանգեզուրի



Սոխ Դերդերիանի

Կովկասի էնդեմիկներ *Սոնասպար Ռադեի-Androsace raddeana Somm. et Levier* և *Բարբեկ Կոլենատի-Saxifraga kolenatiana Regel.*



Սոնասպար Ռադեի



Բարբեկ Կոլենատի



Անդրկովկասի էնդեմիկներ *Սոխ Շովիցի*- *Allium szovitsii* Regel և *Գայլաթաթ Գրոսսհեյմի* *Alchemilla grossheimii* Juz. և այլն:



*Սոխ Շովիցի*

Խուստուփի բուսական աշխարհը հարստացնում են շուրջ 300 տեսակի օգտակար բույսեր՝ ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական, գեղազարդային, որոնցից տեղի բնակչության կողմից կենցաղային կարիքների համար մթերվում են հետևյալ տեսակները:

1. *Շուշանաբանջար խոշորասլունդ (Chaerophyllum macrospermum)*– Երկամյա բույս է, դեղատու, օգտագործվում է մատղաշ ցողունը և տերևները: Հարկավոր է մթերել վաղ գարնանը: Խախտված վայրերում այն հանդիպում է խիտ համակեցություններով, ոչ խախտված վայրերում՝ բնական պոպուլյացիաներում աճում է անհամեմատ նոսր՝ հանդիպելով առանձին անհատներով 4-5 մինչև 10 մ իրարից հեռավորության վրա:



*Գայլաթաթ Գրոսսհեյմի*

2. *Շրեշ ուշագրավ (Eremurus spectabilis N. Bieb.)* - ուտելի, դեղատու, տեխնիկական, գեղազարդային բույս է: Ուտելու համար օգտագործվում են մատղաշ տերևները, իսկ կոճղարմատը օգտագործվում է որպես հումք բարձր որակի սոսիսների պատրաստման համար: Հիմնականում աճում է ուղղաձիգ ժայռոտ լանջերի վրա:



3. *Ճարճատուկ սովորական (Cichorium intybus)* - Դեղաբույս է, օգտագործվում են ստորգետնյա և վերգետնյա օրգանները: Արմատն օգտագործվում է որպես սուրճի փոխանորդ: Արդյունագործական նպատակով մթերում իրականացնելու համար անհրաժեշտ է ընտրել էկոլոգիապես մաքուր տարածքներ, քանի որ այն հիմնականում աճում է ճանապարհների եզրերով կամ խախտված վայրերում:





4. *Քարխոս կոշտ (Symphytum asperum)* - Օգտագործվում են կոճղարմատները: Հանդիպում է անտառներում, գետերի մոտակայքում, ինչպես նաև խախտված ապրելավայրերում առաջացնում է մոնոդոմինանտ բուսուտներ, որոնք հեռանկարային են արդյունագործական մթերման համար:



5. *Մրհունդ խոցված (Hypericum perforatum L.)* - դեղատու, համեմունքային, մեղրատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Օգտագործվում են ծաղկաբույլերը:



6. *Խնկածաղիկ սովորական (Origanum vulgare L.)* - դեղատու, համեմունքային, մեղրատու, տեխնիկական, գեղագարդային բույս է: Օգտագործվում են ծաղկաբույլերը:



7. *Զիվան հսկայական (Cephalaria gigantea (Ledeb.) Bobr.)* - դեղատու բույս է: Օգտագործվում են միայն ծաղկած գլխիկները: Բույսը խոշոր է և աճում է բավական մեծ խմբերով:





8. *Անթառամ ծալքավոր (Helichrysum plicatum)* - Դեղաբույս է: Օգտագործվում են ծաղիկները:



9. *Լերդախոտ ալեհեր (Teucrium polium)* - Օգտագործվում են ծաղկաբույլերը: Խուստուփ զբաղեցնում է փոքր տարածքներ՝ հիմնականում հետանտառային մարգագետիններում և խախտված աճելավայրերում:



10. *Կատվախոտ սխտորուկատերև (Valeriana alliariifolia)* - Օգտագործվում են կոճղարմատները: Խուստուփում հեռանկարային է, գրավում է մեծ տարածքներ, պոպուլյացիաները խիտ են և կարող են ունենալ արդյունագործական նշանակություն:



Հարուստ ու բազմազան է նաև Խուստուփի **կենդանական աշխարհը**, որում հաշվարկվում են 58 տեսակի անողնաշար և 111 տեսակի ողնաշարավոր կենդանիներ: Դրանցից 23-ը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, որոնցից հիշատակման են արժանի անողնաշարներից **Ապոլոնը կամ առագաստաթիթեղը-Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko** (Շիշկերտի շրջակայք).





Թռչուններից՝ *քարարծիվը*-*Aquila chrysaetus*, *գառնանկղը*-*Gypaetus barbatus*,



*սպիտակազուխ անգղը*-*Gyps fulvus*.



Կաթնասուններից՝ *Բեզուրյան այծը*-*Capra aegagrus Erxleben*,



*Անտառակասուն*-*Felis silvestris Schreber*,



*Շեկովնիկովի Կուտրաս*-*Neomys teres (schelkovnikovi) Satunin*





*Ասիական լայնականջ չղջիկը-Barbastella leucomelas* և *Սովորական երկարաթև չղջիկը-Miniopterus schreibersi*



*Գորշ արջը-Ursus arctos Linnaeus* և այլն:



Խուստուփ լեռնագանգվածը և դրան հարակից համայնքները հարուստ են բնական և մշակութային ժառանգությամբ: Դեպի լեռնագանգվածը տանող երթուղին կարող է ծառայել ոչ միայն էկոլոգիական զբոսաշրջության նպատակներին, այլև պատմամշակութային արժեքների ճանաչողությանը: Չհասած ճակատեն համայնք, ճանապարհի աջ կողմում այցելուն կտեսնի ժայռերից կերտված <<փղերին>>:



Փղեր

Ճակատեն համայնքում է գտնվում 18-րդ դարում կառուցված Սուրբ Հռիփսիմե եկեղեցին:



Սուրբ Հռիփսիմե



Շիկահող համայնքում այցելուն հնարավորություն ունի տեսնելու 13-րդ դարում կառուցված Սուրբ Ստեփանոս եկեղեցին և հին կամուրջը:



**Սուրբ Ստեփանոս**

Սրաշեն համայնքում, ճանապարհի ձախ կողմում է գնտվում 17-18-րդ դարերում կառուցված Սուրբ Հռիփսիմե եկեղեցու ավերակները:



**Սուրբ Հռիփսիմե**

Անհնար է Խուստուփ բարձրանալիս չհմայլվել <<Շիկահող>> պետական արգելոցով և դրան հարակից <<Սոսու պուրակ>> արգելավայրով:



**Շիկահողի հին կամուրջը**



**<<Շակահող>> արգելոց**



**<<Սոսու պուրակ>> արգելավայր**